

**Ջավեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
ՄԵՐԻ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ**  
Երևանի պետական համալսարան

**ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ  
ԼԵՁՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ**

*«Մարդ լեզվով է մտածում, զգում և տեսնում»  
Վիլհելմ ֆոն Հումբոլդտ*

Սույն հոդվածում քննության են առնվում դարձվածային միավորների այն հիմնական հատկանիշները, որոնք ի հայտ են գալիս լեզու-մշակույթ փոխհարաբերության ուսումնասիրության փիրույթում: Այլ կերպ ասած, փորձ է արվում վեր հանել խնդրո առարկա լեզվական միավորների բովանդակային պլանի այն բաղադրիչները, որոնց ամբողջականությունը բացահայտում է լեզվի դարձվածային ենթահամակարգի լեզվամշակութային արժեքը: Մասնավորապես լուսաբանվում են իրականություն-լեզու-մշակույթ բազմաբարդ փոխհարաբերության հետազոտման այն հիմնադրույթները, որոնց կիրառումը մեծապես նպաստում է դարձվածային միավորների իմաստային կառույցների մշակութային հարանշանակությունների տարրորոշմանը: Հոդվածում փորձ է արվում նաև կոնկրետ օրինակների վերլուծության հիման վրա փաստարկել դարձվածային միավորների ուսումնասիրության կարևորությունը միջլեզվամշակութային (ֆրանսերեն-հայերեն) հաղորդակցության համատեքստում:

**Բանալի բառեր.** դարձվածային միավոր, մշակութային կոդ, մշակութային հարանշանակություն, լեզվամշակույթ, ազգային մտածելակերպ, ազգային ինքնություն, հատկաբանություն

Գիտական մտքի զարգացման արդի փուլում լեզվական համակարգի դարձվածային միավորները կրկին հայտնվել են հետազոտողների համակ ուշադրության կենտրոնում: «Կրկին» ասելով նկատի ունենք այն, որ նշյալ լեզվամիավորները, հանդիսանալով մի առանձին գիտաճյուղի՝ դարձվածաբանության ուսումնասիրության առարկա, ունեն գիտահետազոտական «հարուստ անցյալ»: Դարձվածային միավորների ուսումնասիրության այս նոր փուլը պայմանավորված է հումանիտար գիտությունների փոխներթափանցումային (ինտեգրացիոն) գործընթացներով: Ճանաչողական տեսության (էպիստեմոլոգիա) համաձայն, գալիս է մի պահ, որ ասպարեզում եղած առանձին գիտությունների նվաճումներն այլևս ի վիճակի չեն լինում լուծելու հասարակության զարգացման արդյունքում ի հայտ եկած խնդիրները և անհրաժեշտություն է առաջանում համա-

պատասխան գիտությունների տվյալների և մեթոդների միատեղման՝ նոր հայեցակարգերի և գիտաճյուղերի տեսքով: Շատ դեպքերում այդ խնդիրները այնպիսի գործաբանական կարևորություն են ձեռք բերում, որ ստանում են սոցիալական պատվերի կարգավիճակ:

Անցյալ դարի 50-ական թվականներին Ամերիկայի Միացյալ Նահանգների Պետդեպարտամենտը մի խումբ մարդաբան-գիտնականների հանձնարարում է ստեղծել մի ծրագիր-ուղեցույց՝ ամերիկյան դիվանագետների հաղորդակցությունը տարբեր լեզվամշակույթների ներկայացուցիչների հետ դյուրացնելու նպատակով: Եվ ահա այս ձեռնարկման շրջանակներում էլ մարդաբան Է. Հոլլի կողմից առաջին անգամ գործածվում է «միջմշակութային հաղորդակցություն» եզրույթը /Садохин, 2005/: Կարելի է ասել, որ ամերիկյան մարդաբանների այս նախաձեռնությամբ հիմք դրվեց նորանոր ճանաչողական տեսությունների և գիտաճյուղերի՝ այդ թվում միջմշակութային հաղորդակցության տեսության և լեզվամշակութաբանության, ձևավորմանն ու զարգացմանը:

Մասնավորապես, լեզվամշակութաբանությունն իր առջև խնդիր է դնում լուսաբանելու իրականության, լեզվի և մշակույթի բազմաշերտ փոխհարաբերությունների բարդագույն խնդիրները, որոնց լուծմանն ուղղված ուսումնասիրություններում կարևոր դերակատարություն են ձեռք բերում դարձվածային լեզվամիավորները: Պատահական չէ, որ լեզվամշակութաբանության չորս հիմնական դպրոցներից մեկը նախընտրել է զուտ դարձվածաբանական ուղղությունը, քանի որ լեզվի և մշակույթի փոխհարաբերության հետազոտման համար դարձվածային միավորները հարուստ լեզվական նյութ են ծառայում: Այս համատեքստում մեծ կարևորություն է ձեռք բերում տարբեր լեզուների դարձվածային համակարգերի և ենթահամակարգերի հետազոտությունը միջմշակութային հաղորդակցության համատեքստում:

Հայտնի է, որ ամեն մի կոնկրետ գիտական ուսումնասիրություն պետք է ընտրի մեթոդաբանական իր գործիքակազմը և հստակեցնի եզրույթների բովանդակությունն իր հետազոտության ռազմավարության խնդիրներին համապատասխան: Այս առումով խիստ հատկանշական է «մշակույթ» եզրույթը, որի բովանդակության շուրջ առկա են մեծաքանակ տեսակետներ և մեկնաբանություններ, որոնք ոչ այնքան միմյանց հակասում են, որքան՝ փոխլրացնում: Այսպես, ամերիկացի մշակութաբաններ Ա. Կրեոբերն ու Կ. Կլակսոնը հաշվարկել են «մշակույթ» հասկացության մոտ հինգ հարյուր սահմանում: Հետաքրքրականն այն է, որ նրանք փորձել են, մաթեմատիկայի լեզվով ասած, ընդհանուր հայտարարի բերել այդ բոլոր սահմանումները, առանցքային գաղափարը ձևակերպելով մոտավորապես այսպես. մշակույթը մարդու՝ իր ողջ պատմության ընթացքում ստեղծած նյութական բարիքների, գաղափարների, պատկերների հավաքականությունն է: Այլ կերպ ասած՝ այն ամենն, ինչ արարվել և արարվում է մարդու, այլ ոչ բնության կողմից, համարվում է

մշակույթ, ինչին հեղինակները տվել են «երկրորդ բնություն» պատկերավոր անվանումը /Kreober, Kluckhohn, 1952: 18/:

Այս չափազանց ընդհանրական ըմբռնումների կողքին գոյություն ունեն նաև «մշակույթ» հասկացության շատ ավելի մասնակի բնորոշումներ, որոնց մեծ քանակությունը ստիպել է գիտնականներին դրանք կանոնակարգել որոշակի խմբերում: Ահավասիկ դրանցից մի քանիսը, մեր կարծիքով՝ կարևորագույնները.

- Նկարագրական – Այս մոտեցման շրջանակներում պարզապես թվարկվում են մշակութային առանձին դրսևորումներ՝ միավորներ, սովորույթներ, արժեհամակարգեր, գործունեության տեսակներ, գաղափարներ, իդեալներ և այլն: Մշակույթն ըմբռնվում է որպես մարդկային գործունեությանը սպասարկող ինստիտուտների և այդ գործունեության նվաճումների մի ամբողջություն, որը մարդու կյանքը տարբերում է կենդանական աշխարհի մյուս տեսակների կյանքից և ծառայում է երկու նպատակի՝ բնությունից մարդու պաշտպանվածության ապահովման և միջանձնային փոխհարաբերությունների կարգավորման:

- Արժեքային – Մարդու կողմից ստեղծված նյութական և հոգևոր արժեքների ամբողջություն:

- Գործունեական – Մարդուն հատուկ պահանջմունքների բավարարմանն ուղղված գործունեություն՝ իր տեսակների բազմազանությամբ:

- Մեկնաբանական – Տեքստերի և դրանց ստեղծման մեխանիզմների համակարգ:

- Կարգավորիչ – Մարդկային փոխհարաբերությունները կարգավորող բարոյական նորմերի և կանոնների համալիր /Зиновьева, Юрков, 2009/:

Որոշակի վերապահումներով կարող ենք ասել, որ մշակույթ երևույթի վերը թվարկված բնութագրիչները կարող են վերագրվել նաև լեզվական համակարգին:

Լեզվամշակութաբանական հաջորդ կարևոր խնդիրը վերաբերում է լեզու – մշակույթ փոխհարաբերությանը, որի առաջացրած բազմաթիվ հարցեր առ այսօր չեն գտել իրենց վերջնական պատասխանները: Այս առումով առաջին փորձերը նկատվում են դեռևս Հումբոլդտի աշխատություններում: Ամենաընդհանուր գծերով այդ մտորումները կարելի է ամփոփել հետևյալ դրույթներում.

- Լեզվում արտացոլվում է նյութական և հոգևոր մշակույթը

- Ամեն մի մշակույթ ազգային է, ինչը լեզվում դրսևորվում է տվյալ ազգին հատուկ աշխարհընկալմամբ

- Ամեն մի ազգային լեզու ունի իր «ներքին ձևը»: Այն «ազգային ոգու» և «ազգային մշակույթի» արտահայտությունն է

- Լեզուն միջանկյալ օղակ է մարդու և նրան շրջապատող աշխարհի միջև /Гумбольдт, 1985/:

Լեզու-մշակույթ փոխհարաբերության շուրջ այս մտորումներն առ այսօր չեն կորցրել իրենց արդիականությունը: Դրանք իրենց յուրովի զարգացումն են ստացել ինչպես համաշխարհային դասական /Bally, Vendryes, Jakobson/, այնպես էլ ժամանակակից նշանավոր լեզվաբանների և փիլիսոփաների աշխատություններում: Մասնավորապես, լեզվափիլիսոփաների բնորոշմամբ, լեզուն մշակույթի պարզ արտացոլանքն է և արտացոլում է իրականությունը, իսկ մշակույթն այդ իրականության անքակտելի մասն է (Բրուտյան, Մարգարյան, Աթալովսկի): Հետաքրքիր տեսակետ է արտահայտում Վ. Գ. Գակը՝ լեզուն միաժամանակ համարելով մշակույթի բաղկացուցիչ մաս և մշակույթի արտահայտիչ: «Լեզուն,- գրում է հեղինակը,- արտացոլում է արտալեզվական մշակույթը, քանի որ այն ինքնին մշակույթի բաղադրիչ է» /Гак, 1998: 260/: Իսկ Ռ. Գալիսոնի կարծիքով՝ «Լեզուն մշակույթի ընդհանրական շարժիչն է, աղբյուրն ու արդյունքը» /Galisson, 1991: 118/:

Ինչպես տեսնում ենք, «իրականություն – մշակույթ – լեզու» եռամիասնության անդամների միջև դիտարկվում է համամասնական փոխհարաբերություն. փոխվում է իրականությունը՝ փոխվում է մշակույթը, փոխվում է լեզուն՝ դառնալով միաժամանակ այդ մշակույթի (իրականության) թե՛ բաղադրիչը, թե՛ արտահայտիչը և թե՛ շարժիչ ուժն ու արդյունքը: Մեջբերված մոտեցումներում ակնհայտորեն շեշտարկվում է մշակույթի ազդեցությունը լեզվի վրա, սակայն, որքան էլ զարմանալի թվա, գիտության մեջ առկա է նաև ճիշտ հակառակ կարծիքը, այն է՝ լեզուն է ազդում մշակույթի վրա: Այս խնդրի ուսումնասիրությամբ զբաղվել են, նախ և առաջ, Սեպիր-Ուորֆի՝ լեզվական հարաբերականության հանրահայտ դպրոցի ներկայացուցիչները, որոնց խորին համոզմամբ մարդիկ աշխարհը տեսնում են իրենց մայրենի լեզվի (նույնն է, թե՛ ազգային մշակույթի) պրիզմայի միջով: Ակնհայտորեն այստեղ մենք գործ ունենք երկու բևեռային տեսակետների հետ, և երկու կողմերն էլ հանդես են գալիս իրենց փաստարկներով: Հետաքրքիրն այն է, որ այս խնդիրը ժամանակ առ ժամանակ ակտիվ քննարկման առարկա է դառնում և, մեր տպավորությամբ, այսօր շատ լեզվաբաններ հակված են այն մտքին, որ ազդեցությունը երկկողմանի է. լեզվից դեպի մշակույթ, մշակույթից դեպի լեզու, պարզապես պետք է որոշել այդ ազդեցությունների չափաբաժինը /Бородай, 2013: 17/:

Հարկ է նշել, որ լեզվի և մշակույթի փոխհարաբերության քննությունը չի սահմանափակվում համակարգային մակարդակով (լեզվական համակարգ – մշակութային համակարգ), այլ ներառում է նաև ենթահամակարգերը: Այսպես, լեզվաբաններ Ե. Մ. Վերեշչագինը և Վ. Գ. Կոստոմարովն իրենց հանրահայտ «Լեզու և մշակույթ» աշխատության մեջ հայտնում են այն միտքը, որ դարձվածային միավորներն

այն լեզվական նշաններն են, որոնց իմաստային կառուցվածքում առկա է մշակութային արժեք ներկայացնող բաղադրիչ /Верещагин, Костомаров, 2005/: Շատ հեղինակների համոզմամբ այդ մշակութային բաղադրիչն առավել ցայտուն կերպով արտահայտվում է առաձներում և ասացվածքներում: Դրանք բնութագրվում են որպես միկրոաշխարհներ, որոնք իրենց մեջ կրում են թե՛ առողջ բանականություն, և թե՛ բարոյական արժեքներ, որ փոխանցվում են սերնդեսերունդ՝ որպես մարդկային գործունեության ուղեցույց /Միրզոյան, 2002: 25/: Հատկանշական է, որ դարձվածային միավորների բովանդակության պլանի բաղադրիչը ժամանակակից լեզվամշակութաբանների աշխատություններում ստացել է «մշակութային կոդ», «մշակութային հարանշանակություն» անվանումները /Маслова, 2001; Телия, 2008/:

Լեզվամշակութաբանները մատնանշում են մի կարևոր առանձնահատկություն, համաձայն որի դարձվածային միավորների գրեթե բոլոր տիպերին ու տեսակներին (կայուն բառակապակցություններից մինչև առաձներ ու ասացվածքներ) հատուկ է իրերի և երևույթների ոչ թե պարզ նկարագրությունը, այլ դրանց մեկնաբանությունը, գնահատումը, սուբյեկտիվ բնութագրումը՝ պայմանավորված ազգային մտածելակերպով ու պատմամշակութային ավանդույթներով /Маслова, 2001/: Այս կերպ ստեղծվում է աշխարհի սուբյեկտիվ ազգային լեզվական պատկերը: Այս կապակցությամբ Վ. Ա. Մասլովան գրում է. «Թվում է, թե քանի որ մարդիկ օժտված են համանման մտավոր հատկանիշներով, դարձվածային միավորներում պետք է գերիշխեն համընդհանուրը, համամարդկայինը, այլ ոչ՝ ազգամշակութայինը: Իրականում ամեն ինչ ճիշտ հակառակն է» /Маслова, 2001: 87/: Ասվածն, անշուշտ, վերաբերում է լեզվական միավորների արտահայտության պլանին, ինչը գիտական գրականության մեջ բազմիցս արտահայտվել է ամենատարբեր հայեցակարգային տեսությունների տեսքով: Պետք է խոստովանել, որ միջլեզվամշակութային հաղորդակցության համատեքստում լեզվական միավորների արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերության խնդիրն ամեն անգամ ներկայացվում է նոր լույսի ներքո, մի նոր եզրաբանությամբ: Դրա վկայությունն է Վ. Ա. Մասլովայի հետևյալ ձևակերպումը. «Շատ դարձվածներ միավորվում են արտալեզվական իրականության երևույթների համամարդկային իմացությամբ, սակայն լեզուներում տարբերվում են պատկերավորության հենքով, երկրորդային անվանման տեխնիկայով» /Маслова, 2001: 88/: Նման «տեխնիկայի» գործադրմամբ «արարվում է» լեզվի հատկաբանական էությունը (իդիոմատիկա), լեզվական հանրույթի ազգամշակութային ինքնությունը: Այս առումով մեծ դերակատարություն ունեն դարձվածային միավորները, որոնց հավաքականությունն իրավամբ կարող է համարվել ազգային ինքնության «վկայագիր»:

Շատ հաճախ դարձվածային միավորների ծագումնաբանական, իմաստաբանական, մշակութաբանական վերլուծությունների արդյունքի վրա դատողություններ են արվում այնպիսի մի բարդ երևույթի մասին, որպիսին ազգային մտածելակերպն է, ազգային հոգեբանությունը: Նման դատողությունների հիմքում ընկած է մի պարզ կանխադրույթ. ամեն մի լեզվական հանրույթ յուրովի է հատվածավորում, անվանման միջոցով արժևորում արտալեզվական աշխարհը: Հետազոտական համեմատական մեթոդը, նշված երևույթների բացահայտման տեսանկյունից, ունի առաջնային նշանակություն: Քննության առնենք մի քանի օրինակ:

Այսպես. փոխադրամիջոցից օգտվելու իրողության «անվանման» համար ֆրանսերենը «նախընտրել» է «վերցնել» (prendre), իսկ հայերենը՝ «նստել» բայը (prendre un moyen de transport – որևէ փոխադրամիջոց նստել): Ամենայն հավանականությամբ, նշյալ դարձվածային միավորների բայական անդամների «ընտրությունը» երկու լեզուներում էլ կապված է այն ժամանակաշրջանի հետ, երբ ձին է եղել միակ փոխադրամիջոցը: Տրամաբանական է ենթադրել, որ այս փոխադրամիջոցից օգտվելու համար անհրաժեշտ է կատարել երեք գործողություն՝ հետևյալ հաջորդականությամբ. ձի բարձրանալ – ձիու վրա նստել – ձիու սանձից բռնել (սանձը ձեռքը վերցնել): Ինչպես տեսնում ենք ֆրանսերենը «արժևորել» է նկարագրվող գործողության առաջին փուլը՝ ձի բարձրանալը (monter à cheval), իսկ հայերենը՝ երկրորդ փուլը՝ ձի նստելը: Հետագայում, երբ ձիերին փոխարինել են տեխնիկական փոխադրամիջոցները, հայերենը պահպանել է նախկին տարբերակը (ձի նստել – ավտոբուս նստել), իսկ ֆրանսերենը նախընտրել է գործողության երրորդ փուլը (սանձը ձեռքը վերցնել – prendre le cheval par les brides): Արդյունքում ձևավորվել և հիմնավորվել է “prendre un moyen de transport” դարձվածային միավորը:

Եթե փորձենք նույն մեթոդով քննության առնել “mettre la table” և «սեղան դնել», «սեղան գցել» դարձվածային միավորները, ապա պետք է սկսենք, ինչպես նախորդ օրինակում, հյուրասիրության սեղանի հետ կապված հետևյալ գործողությունների սխեմատիկ պատկերից: Ենթադրվում է, որ հյուրասիրության համար ինչ-որ անկյունից պետք է սեղանը բերել և դնել սենյակի կենտրոնական մասում, որից հետո վրան սփռոց գցել: Ահա սրանք են հյուրասիրության նախապատրաստական երկու կարևոր գործողությունները՝ սեղանը դնել – սեղանի վրա սփռոց գցել: Ֆրանսերենն արժևորել է գործողության առաջին փուլը՝ սեղանը դնել – mettre la table, հայերենը՝ և՛ առաջինը, և՛ երկրորդը միաժամանակ: Հայերենում մենք ունենք երկու հոմանիշ դարձվածք՝ սեղան դնել, սեղան գցել: Կարծում ենք՝ «սեղան գցել» դարձվածքը «սեղանի վրա սուփրա գցել» արտահայտության կրճատ ձևն է:

Անշուշտ մեր դատողությունները կրում են վարկածային բնույթ և պարզապես ենթադրություններ են, որոնք, սակայն, մեր կարծիքով,

որոշակի լույս են սփռում լեզվի հատկաբանական առանձնահատկության ձևավորման մեխանիզմների վրա: Նման քննությամբ փորձ է արվում լուսաբանել այն իրողությունը, որ երկրորդային անվանման գործընթացն ուղղակիորեն կապված է տվյալ լեզվական հանրույթի կողմից արտալեզվական առարկաների և երևույթների յուրակերպ «գնահատության» և «արժևորման» հետ:

Շատ հաճախ միջլեզվամշակութային հաղորդակցությունը դժվարանում է, երբ հաղորդակից մշակույթում բացակայում է տվյալ իրողությունը (բնականաբար և համապատասխան անվանումը):

Այսպես, որքան էլ փորձենք ֆրանսերեն լեզվակրին բացատրել «բաղնիքի անուշ» արտահայտությունը, միևնույն է՝ լիարժեք ըմբռնում տեղի ունենալ չի կարող, քանի որ ֆրանսիական մշակույթում հանրային բաղնիք գնալը երբեք չի ընկալվել որպես մի առանձնակի արարողություն, հետևաբար բացատրություն չունի նաև համարժեք դարձվածային միավորը: Նույն կերպ ֆրանսերենի “Le jeu n’en vaut pas la chandelle” դարձվածային միավորը չունի իր համարժեքը հայերենում, քանի որ գոյություն չունի համապատասխան իրադրությունը, ավելի ճիշտ՝ գոյություն չի ունեցել: Տվյալ արտահայտությունն, ի դեպ, շատ հաճախ գործածվող, հայերեն լեզվակիրն ընկալում է ֆրանսերենից ռուսերեն պատճենահանված միջնորդությամբ՝ «Игра не стоит свеч»:

Տրամաբանական է ենթադրել, որ այս կարգի դարձվածային միավորները մեծ ծավալ չեն կազմում, քանի որ քաղաքակրթական զարգացման գրեթե նույն մակարդակի վրա գտնվող լեզվամշակույթներն ունեն ավելի շատ ընդհանրություններ, քան տարբերություններ և, հետևաբար, ավելի մեծ քանակ են կազմում «պատկերավոր հենքով» տարբերվող դարձվածային միավորները, որոնք ավանդական դարձվածաբանության մեջ կոչվում են դարձվածային համաբանություններ (Un clou chane l’autre – խոտորնակին խոտորնակ, Tel bruit, tel écho - ինչ-որ ասես՝ էն կլսես, on est souvent puni par où l’on a péché - ով ինչ անի, իրեն կանի, Qui se sent morveux, se mouche - գող՝ սիրտը դող):

Ամփոփելով վերը շարադրվածը, կարելի է ասել, որ դարձվածքները տվյալ հանրույթին հատուկ մշակութային տեղեկություն պարունակող կարևորագույն լեզվական միավորներ են՝ ազգային մտածելակերպի և ինքնության արտահայտիչներ: Հենց այս տեսանկյունից էլ դարձվածային միավորների ուսումնասիրությունը միջլեզվամշակութային հաղորդակցության համատեքստում մեծ կարևորություն է ձեռք բերում:





